«ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ «ՇԻՐԱԿ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ

ՀՀ, 3104 Գյումրի, Վարպետաց 176, 301, հեռ. +(374 312) 6-69-92, +(374 91) 45-13-37
Էլ փոստ՝ info@shirakcentre.org
Կայք՝ www.shirakcentre.org

ՀՀ քաղաքաշինության նախարար
Վարդան Վարդանյանին

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

Հարգելի պարոն նախարար

Անօթևան Սուսաննա Եղտիարյանի ընտանիքը երկրաշարժին կորցրել է 2 սենյականոց բնակարան, սակայն ներկայումս մնացել է միայնակ, որդին և քույրը մահացել են: Նա հաշվառված է Գյումրու անօթևանների հերթացուցակի 1 սենյականոց բնակարանի հավակնորդների 812-րդ հերթական համարում:

Սուսաննա Եղտիարյանը մեկ տարի է՝ ամառ-ձմեռ ապրում է կիսակառույց, դուռ, պատուհան և կտուր չունեցող շինության մեջ (http://www.shirakcentre.org/hy/news/1116-shirak-centre-ngo): Թեև նա նախորդ շաբաթ աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակելի տների (բնակարանների) հատկացման հարցերով հանձնաժողովի կողմից ճանաչվեց որպես շահառու, սակայն ինչպես գիտենք ընթացիկ տարում Գյումրիում բնակարանամուտ նախատեսված չէ, ուստի նա պարտադրված կլինի ևս մեկ ձմեռ գոյատևել այդ կիսակառույցում:

Պարոն նախարար

Մեր ունեցած տեղեկատվության համաձայն դեռևս նախորդ տարի Գյումրիում շահագործման հանձնված Մուշ-2 թաղամասում կան 5 հատ մեկ սենյականոց ազատ բնակարաններ, որոնք նախատեսում եք բաշխել բնակարանաշինության երկրորդ փուլով շահագործվելիք բնակարանների հետ միասին:

Առաջարկում ենք Մուշ-2 թաղամասի վերը նշված ազատ բնակարաններից որևէ մեկը բացառության կարգով հատկացնել, բառիս բուն իմաստով, փողոցում բնակվող Սուսաննա Եղտիարյանին, չսպասելով հաջորդ տարվա ընդհանուր բնակարանների բաշխման գործընթացին:

Կից ուղարկում ենք լուսանկարներ:

Հարգանքով «Շիրակ կենտրոն» ՀԿ նախագահ՝ Վահան Թումասյան

Գյումրի,
17.10.2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

37510. ք.Երևան. Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
Հեռ.՝ 589080 Ֆաքս՝ 523200
www.mud.am
E-mail:info@mud.am

09.11.11թ. N 01/13.1/5617-11

ՀԵՐՆ----------ԱՊ----------

ՀՀ Շիրակի մարզ, ք.Գյումրի,
<Շիրակ կենտրոն> ՀԿ նախագահ
պարոն Վ.Թումասյանին

Հարգելի պարոն Թումասյան

Հայաստանի Հանրապետության Գյումրի քաղաքի բնակիչ Սուսաննա Եղտիարյանին Գյումրի քաղաքում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում քաղաքի Մուշ-2 թաղամասում 2010 թվականին կառուցված բազմաբնակարան շենքերի չբաշխված բնակարաններից բնակարան հատկացնելու հարցի վերաբերյալ Ձեր 2011 թվականի հոկտեմբերի 17-ի միջնորդության կապակցությամբ հայտնում եմ.

հարցը քննարկվել է աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման նպատակով պետական աջակցությամբ իրականացվող բնակարանային շինարարության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացման հարցերով հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 19-ին Գյումրի քաղաքում կայացած նիստում՝ Ձեր մասնակցությամբ: Քննարկման արդյունքներով, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 26-ի N1402 որոշման 3-րդ կետով, որի դրույթների համաձայն պետական աջակացության ծրագրերի շրջանակներում կառուցված բնակարանները բաշխվում են վիճակահանությամբ՝ Ձեր միջնորդությունը չի բավարարվել:

Միաժամանակ, ելնելով Սուսաննա Եղտիարյանի բնակության անմխիթար պայմաններից՝ նիստի ժամանակ Գյումրու քաղաքապետարանի ներկայացուցիչը պատրաստակամություն է հայտնել՝ մինչև սահմանված կարգով Ս.Եղտիարյանին բնակարան հատկացնելը նրան ապահովել հանրակացարանային սենյակով:

Հարգանքով

Վ.Վարդանյան

Ե.Աթայան
52-46-80